ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/194 «21» 05 2025 թ.

«ԱՐՄՏՈՐԳ» ՓԲԸ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
Կ. ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

ՀՐԱՎԵՐ

ՊԱՀԱԾՈՅԱՑՎԱԾ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ներքին գործերի նախարարության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել **պահածոյացված բանջարեղեն:**

Առաջարկվում է Ձեզ մատակարարել վերոնշյալը:

Գնումները ֆինանսավորվելու է ՀՀ ՆԳՆ բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնման ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնումներին մասնակցելու իրավունքը հավաստելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ **«ԱՐՄՏՈՐԳ» ՓԲԸ-ն** ունի.

1. մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը
2. մասնագիտական փորձառություն
3. տեխնիկական միջոցներ
4. ֆինանսական միջոցներ
5. աշխատանքային ռեսուրսներ

Ձեզ է ուղարկվում **ՀՀ ՆԳՆ ՀՄԱԱՊՁԲ-2025/Ա-90** ծածկագրով ընթացակարգի պայմանագրի նախագիծը:

Համաձայնության դեպքում անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ձեր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը, ինչպես նաև ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություններ պարունակող կայքէջի հղումը:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ